ՎԱՆՈ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ *

DOI:10.57155/XEAB1910

ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻՆ ԽՐԱՏԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ

Բանալի բառեր՝ *Արձակ խրատ, տաղերգության ժանրի խրատ ենթատեսակ, ժանրակազմ առանձնահատկություն, Ներսես Շնորհալի, նորարար:*

Սույն հոդվածի խնդրո առարկան Ներսես Շնորհալու խրատ բանաստեղծական տեսակի սկզբնավորման հարցն է:

Դեռևս Ե դարում հայ մատենագրության մեջ հանդիպում ենք թարգմանական և ինքնուրույն խրատների: Ինքնուրույն խրատները կապվում են Եզնիկ Կողբացու անվան հետ: Խրատն ըստ էության կեցության փիլիսոփայությունն է, պատահական չէ, որ «Առակաց գիրքը» գրում է. «Ամո՛ւր բռնիր իմ խրատը եւ բաց չթողնես այն, այլ պահի՛ր, որովհետեւ քո կեանքն է այն» (Առակ. Դ 13): Ուրեմն՝ Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց»-ին կցված «Նոյն Եզնիկ վարդապետի» խրատները, որոնք ունեն կրոնական ուղղվածություն, հայ ինքնուրույն խրատական արձակի հիմքն են դնում: Այնուամենայնիվ, այդ խրատները զերծ չեն նաև աշխարհիկ-բարոյական գաղափարից: Խրատների վերջում հայ փիլիսոփան խոսում է խրատի օգտակարության մասին. «Մեղրը քաղցր է, բայց հիվանդոտ մարմնին վնաս է տալիս. խրատն ու կշտամբանքը օգտակար են, բայց անօգուտ են նրա համար, ով դեմքը դեպի հակառակ կողմն է ուղղել»[1]:

Արդեն հետագա դարերում խրատը բավականին տարածում գտած երևույթ է, այն թափանցում է նաև ժողովրդական առակների ու առածների մեջ: Վերջին հաշվով, առակների լուծումը խրատն է, որտեղ խրատելու համար ընտրվում է այլաբանական միջավայր: Խրատի ժանրը միջին դարերում հարստանում է ինչպես ինքնուրույն, այնպես էլ թարգմանական ճանապարհով: Լայն տարածում են

---

* ԳԱԱ գրականության ինստիտուտի գիտաշխատող, ՎՊՀ պրոֆեսոր, vano.exiazaryan@mail.ru, հոդվածը ներկայացնելու օրը՝ հոկտեմբերի 4, 2023, հոդվածը գրախոսելու օրը՝ 20 նոյեմբերի, 2023:

1 **Եզնիկ Կողբացի**, *Եղծ աղանդոց*, Երևան, 1970, էջ 189:

գտնում «Խրատ Խիկարայ»[2] *(ասորերենից), «Բանք իմաստասիրաց»*[3] *(հունարենից), «Խրատք Նուշիրուանի»*[4] *(պարսկերենից), և այլ թարգմանական խրատներ: Այս կարգի խրատների շնորհիվ է, որ հայ բանաստեղծության մեջ հիմք ստեղծվեց սկզբնավորելու մի նոր բանաստեղծական որակ՝ խոհախրատական բանաստեղծությունը, որը դարձավ հայ միջնադարյան տաղերգուների ամենասիրելի թեմաներից մեկը: Մանուկ Աբեղյանը, խոսելով իմաստասիրական-ուսուցական բանաստեղծության մասին, հանգում է շատ կարևոր ու սպառիչ մի հետևության. «Թեպետև այդ քերթվածները պատարուն են բարոյակրթական քարոզներով, երբեմն կազմված են մի ամբողջ շարք իմաստական ասքերից-բարոյական սենտենցիաներից, բայց դրանց հեղինակներն իսկական բարոյախոսներ-մորալիստներ չեն: Նրանց երկերն ուսուցական կամ խրատական լինելով հանդերձ՝ սովորաբար իսկական քնարերգություններ են, որովհետև ոգված են անձնական տրամադրությամբ, ջղուտ և խորն զգացած, և բարոյական խրատներն էլ ըստ երևույթին իրենց հեղինակների փորձառության և ապրումների արգասիք են, ինչպես, օրինակ Ֆրիկի և Կոստանդին Երզնկացու»*[5]*:*

Խրատական «բանք»-երի ուսումնասիրման առումով շնորհակալ գործ է կատարված Արշակ Մադոյանի «Հայկական միջնադարյան պոեմը» գրքում, որտեղ հեղինակն առանձին կանգ է առնում խոհախրատական «բանք»-երի վրա, խոսում Շնորհալու, Գրիգոր Տղայի, Ֆրիկի, Հովհաննես և Կոստանդին Երզնկացիների, Առաքել Սյունեցու, Մկրտիչ Նաղաշի և այլոց խրատական «բանք»-երի մասին[6]*: «Հայ միջնադարյան գրականության ժանրեր» գրքում Վարագ Ներսիսյանը, բնութագրելով տաղերգության ժանրը, ժանրային դասակարգման է ենթարկել հայ միջնադարյան տաղերգությունը՝ առանձնացնելով նաև խրատ տեսակը: Խոսելով խրատի ժանրի մասին՝ Վ. Ներսիսյանը ընդհանուր գծերով ներկայացնում է այդ ժանրի ծագումը, զարգացման ընթացքը:*

Ներսիսյանը կատարում է նաև խրատի ժանրի տիպաբանական գծերն ամփոփող ընդհանրացում՝ առանձնացնելով «ժարակազմ երեք հիմնական հատկանիշներ»: «Դրանցից ամենակայունը խոսքի հորդորական բնավորությունն է, որ ձև ու բովանդակություն է ստանում ուսուցողական-բարոյակրթական նպա-

---

2 *Պատմութիւն եւ խրատք Խիկարայ իմաստնոյ*, աշխատասիրությամբ ***Ա. Մարտիրոսյանի***, հ. Ա., Երևան, 1969, հ. Բ, Երևան, 1972, նաև՝ **Ռ. Պողոսյան**, *Խիկարի զրույցը հայ մատենագրության մեջ*, PhD thesis, ԵՊՀ, Երևան, 2014 (http://etd.asj-oa.am/4127/):

3 *Սոփերք հայկականք*, Վենետիկ, 1853, հ. Ա, էջ 9-59: Պահպանվել է բազմաթիվ ձեռագրերով և զանազան տարբերակներով: Նորագույն ուսումնասիրություն այդ բնագրի մասին՝ **Ռ. Պողոսյան**, «ԺԳ դարում ընդօրինակված «Բանք իմաստասիրաց»-ի չորս տարբեր բնագիր», *ԲՄ №* 35, 2023, էջ 189-203:

4 *Խրատք Նուշիրվանի*, աշխատասիրությամբ *Բ. Զուգասզյանի*, Երևան, 1966:

5 **Մ. Աբեղյան**, *Երկեր*, հ. Դ, Երևան, 1970, էջ 343:

6 **Ա. Մադոյան**, *Հայկական միջնադարյան պոեմը (ԺԱ-ԺԶ դդ.)*, Երևան, 1985, էջ 188-220:

տակամիտումով։ Հորդորը սովորաբար դրսևորվում է երկու կերպ՝ հաստատական և արգելական, իր մեջ թաքցնելով խրատատուի հոգատար վերաբերմունքը այն անձի կամ խմբի նկատմամբ, որին ուղղված է խոսքը։ Ժանրի հաջորդ ընդհանրական գիծն էլ հենց խոսքի ուղղվածությունն է երկրորդ դեմքին»[7]։ Քանի որ «խրատի մեջ գծագրվող բնավորությունը միայն հեղինակային կերպարն է, որն ընդհանրացնում է միջնադարյան մտածող անհատականությանը՝ նրան բնորոշ կրոնական և աշխարհիկ ըմբռնումներով, անձնական ու հասարակական ձգտումներով, լավին ու բարուն հասնելու ներքին մղումով»[8], ապա խրատը դիտվում է իբրև քաղաքացիական քնարերգության տեսակ՝ քնարական ակնհայտ բաբախներով, որով էլ չափածո խրատը տարբերվում է արձակ խրատից։

Խրատական բանաստեղծությունը ձևավորվել է միջնադարյան արձակ խրատի կաղապարի վրա։ Ինչպես արդեն նշեցինք, հինգերորդ դարում թարգմանված խրատներն ունեն մի կարևոր առանձնահատկություն, որը փոխանցվում է միջնադարյան խրատական պոեզիային։ Խրատի հիմքում ընկած է մի էական հատկանիշ՝ արտահայտված խրատող-խրատվող հարաբերությամբ։ Այս հատկանիշը հատուկ է նաև խրատական բանաստեղծությանը, թեև տարբեր դրսևորումներով և բանաստեղծական հնարանքներով։

Խրատի կառուցվածքային առանձնահատկություններից մեկն էլ նրա ձևական կողմն է, այսինքն՝ խրատող-խրատվող հարաբերության զգացական կապի դրսևորումը, ասելիքը դյուրամատչելի մատուցելը, խրատվողի հոգեկան աշխարհի հետ շփման եզրեր ստեղծելը։ Ահա այն բանալին, որը բացում է խրատական պոեզիայի ստեղծման գաղտնիքը։

Առաջին չափածո խրատական գործերը Ներսես Շնորհալու խրատամանկավարժական բանաստեղծություններն են։ Շնորհալին տալիս է նույն խրատները, որոնք տվել են իրենից առաջ, բայց խրատում է այնպես, ինչպես ոչ ոք չի խրատել։ Առաջ է գալիս երկու խնդիր՝ խրատի ուսուցումը և խրատի մատուցումը։ Շնորհալին փոխում է խրատի մատուցման ձևը, այն դարձնում զվարճալի, խրատվողի համար հետաքրքրաշարժ։ Այս ամենը, ինչ խոսք, վերածնության ոգու դրսևորումն է, այն էլ Շնորհալու բանաստեղծական շնորհով հագեցած։ Եվ գրվում են «Տեառն Ներսիսի խրատ ուսումնականաց մանկանց այբեւբենից տառից ոտանաւոր տաղիւ չափոյ», «Բան ներտաղական ի խրատ ոգւոց համայնից ի դիմաց մերոյին տառից տանց յիւրաքանչիւրսն քառից» խրատները։

Ակնհայտ է, որ մանկավարժ Շնորհալին մանուկներին բարոյակրթելու նպատակով այբուբենի տառերի ծայրակապով հորինել է իր «Տեառն Ներսիսի

---

7 **Վ. Ներսիսյան**, «Տաղերգության ժանրերը», *Հայ միջնադարյան գրականության ժանրեր*, Երևան, 1984 (էջ 179-258), էջ 239։

8 Նույն տեղում, էջ 240։

խրատ ուսումնականաց մանկանց այբեւբենից տառից ոտանաւոր տաղիւ չափոյ» խրատը, որը հայ խրատական բանաստեղծության երախայրիքն է։

Ուշագրավ է, որ ամեն տառն ունի մի խորհուրդ, որով Շնորհալին ոչ միայն ուսուցանում է այբուբենը, այլ դաստիարակիչ որևէ խնդիր ի ցույց դնում աշակերտի համար։

ԳԻՄԸՆ գանձ է ֆեզ բեւր բարի,
Գրելով զիմաստս ի տախտակի.
Զնա արկ ի ֆոյդ պարանոցի,
Որ պատուական է ֆան զոսկի[9]։

Եթե Գիմ տառը գանձն է բարության, ապա Դա տառը բացում է գիտության իմաստության դռները աշակերտի առաջ, իսկ Շնորհալին հորդորում է աշակերտին բացել ու քաջաբար մուտք գործել գիտության դռներից ներս.

Դուռըն բանայ ֆեզ գիտութեան
Ըզտանարին իմաստութեան.
Բախեա և մուտ արիութեամբ,
Մի՛ արտաքոյ մնար հեղգութեամբ[10]։

Իսկ Զա տառն ուսուցանում է, որ գիտությունը թմբուկի ձայնի պես զարթուն է պահում մանկան միտքը, ուստի Շնորհալին հորդորում է աշակերտին ուսման նկատմամբ անտարբեր չլինել, որ հետո վայ չտա իր անձին.

Զարթուցանէ ըզֆեզ, մանուկ,
Զայնիւ հընչմամբ որպէս թմբուկ.
Մի՛ յուսմանէ լինիր տաղտուկ,
Զի մի՛ տաս վայ անձինդ յատուկ[11]։

Ըթ տառի խորհուրդն էլ հենց այն խրատն է, որ աշակերտին հորդորում է հեռու մնալ խրատը չլսողներից՝ «անխրատիցըն», որ այդ արատն արմատ չգցի աշակերտի սրտում.

Ընդ ֆեզ խօսի զայս բան խրատ,
Ի յանխրատիցըն կալ ի զատ,
Զի մի՛ տընկեն զինքնեանցն արատ
Ի սրտի ֆում որպէս զարմատ[12]։

Ուշագրավ է Պէն տառի միջոցով բարոյակրթելու խրատը, որով պատգամում է պարկեշտություն ու չափավորություն՝ խրատելով հեռու մնալ որկրամո-

---

9 *Մատենագիրք Հայոց*, հ. ԻԱ, ԺԲ դար, *Ներսես Շնորհալի*, Գիրք Ա, Երևան, 2018, էջ 493։
10 Նույն տեղում։
11 Նույն տեղում, էջ 494։
12 Նույն տեղում։

լութիւնից ու արբեցողութիւնից.

Պէն պատուիրէ պարկեշտ լինել,
Մի զորովայնդ խրճողել,
Մի՛ ըզգինի բընաւ սիրել,
Մի՛ տարաժամ զբերանդ յածել[13]:

Բնականաբար, միջնադարի վարդապետ բանաստեղծը պետք է նախ հոգևոր խրատ սերմաներ աշակերտի սրտում՝ հորդորելով հեռու մնալ չար մերձավորներից.

Տայ քեզ խրատ բան հոգեւոր,
Պահել զհոգիդ քո զգուշաւոր,
Մի՛ յոք հրպել արատաւոր,
Եւ մի՛ ունել չար մերձաւոր[14]:

Խրատական բանքի ժանրային բնույթին հատուկ՝ Շնորհալին հորդորում է շատախոս չլինել, անկարգ չծիծաղել, չար ու վիճաբան-կռվարար չլինել.

Իւսէ ընդ այս բանըս յարմար,
Մի՛ շատ խօսել և վայրապար,
Մի՛ ծիծաղել անկարգաբար,
Մի՛ վիճաբան լինել և չար[15]:

Այբուբենի տառերի հաջորդականությամբ գրված այս ծայրակապային խրատը լրացվում է ՆԵՐՍԵՍԻ Է ծայրակապով բանաստեղծական 16 տողանի տնով.

Նախանձելի մարդկան լինիս,
Թէ զվերագրեալսդ ի միտ ունիս.
Ե՛կ բե՛ր, մանուկ, զունկըն քո յիս,
Լո՛ւր և անսա՛ իմում բանիս:
Բաբուն լինիմ բըղխմամբ սըրտիս,
Ուսուցանել քեզ ըզբարիս.
Սիրեա՛ զուսումն՝ որով պատուիս
Ի յերկնայնոցն և ի յերկրիս:
Երանելի և մեծ լինիս,
Եթէ զերկեղ Տեառն ուսանիս:
Սիրոյ ի բաց լեր աշխարհիս,
Եւ յԱստուծոյ սէրըն վառիս:

---

[13] Նույն տեղում, էջ 498:
[14] Նույն տեղում, էջ 499:
[15] Նույն տեղում:

Ինձ լուր, որդեակ, հաւր քո խրատիս,
Եւ յուսմանէ մի՛ ծուլասցիս.
Էթէ ի յայս սէր բորբոքիս,
Անանց կենաց ժառանգ լինիս[16]:

Ակնհայտ է, որ Շնորհալին որպես բաբուն-վարդապետ հայրաբար պատգամում է լսել իր՝ ուսուցչի սրտից բխած բարի խրատները՝ հորդորելով սիրել ուսումը, հեռու մնալ աշխարհի սիրուց և ապրել Աստծո երկյուղածությամբ ու սիրով:

Ինչպես տեսնում ենք, Շնորհալին (խրատողը) ընտրում է զվարճալի և ուսուցման համար նպատակասլաց ձև՝ մանուկներին (խրատվողին) խրատելու համար: Այդպիսով, Շնորհալին սկզբնավորեց հայ խրատական բանաստեղծությունը, այսինքն՝ արձակ խրատները վերածեց չափածոյի՝ դառնալով խրատական բանաստեղծության նորարարը հայ պոեզիայում: Եվ սա կատարվեց ոչ պատահական, քանի որ Շնորհալին ուներ իր տեսական «հայացքը բանագործության»[17] մասին և չափածո խոսքի աստվածային շնորհ:

Եթե առաջին խրատում բանաստեղծական տունը քառատող է, ապա մյուս՝ «Բան ներտաղական ի խրատ ոգւոց համայնից ի դիմաց մերոյին տառից տանց յիւրաքանչիւրսն քառից»-ում, տունն ութնյակ է, իսկ այս դեպքում խրատը հասցեագրվում է ոչ թե մանուկներին, այլ հանրությանն առհասարակ:

Այսպես՝ Բեն տառի միջոցով Շնորհալին խրատում է ընկերների նկատմամբ լինել համբերատար, սանձել լեզուն ու նախատինքի խոսքեր չասել.

Բենըն բանից, ասէ, չարաց՝
Սանձեա զլեզուդ վասն ընկերաց.
Ի բերանոյ քո հան ի բաց
Զխաւաս աղտեղիս նախատանաց:
Նա և ի բան բամբասանաց՝
Դիր պահապան քոյոց շրթանց,
Զի ապրեսցիս դու ի մեղաց
Եւ յանաչառ դատաստանաց[18]:

Թո տառի միջոցով խրատում է լինել քաղցրախոս, հեզ ու խոնարհ, հեռու մնալ ամբարտավանությունից.

Այլ ըստ հարանց քոց, որ անցան,
Ծանիր ըզքեզ ծաղկի նըման.

---

16 Նույն տեղում, էջ 500:
17 **Մ. Աբեղյան**, *Երկեր*, հ. Դ, էջ 104:
18 *Մատենագիրք Հայոց*, հ. ԻԱ, ԺԲ դար, *Ներսես Շնորհալի*, Գիրք Ա., էջ 481:

Եւ մի՛ լինիր ամբարտաւան,
Այլ քաղցր և հեզ խոնարհական[19]:

Հոգևոր խրատների շարքը շարունակվում է, երբեմն էլ համալրվում աշխարհիկ խրատներով: Ահա Յո տառի միջոցով վարդապետ բանաստեղծը խրատում է զերծ մնալ նենգությունից ու նախանձից.

Յոյն ցուցանէ միւս բան խրատ,
Որ ի չարեաց առնէ ազատ,
Մի՛ նախանձիր բընաւ ընդ մարդ,
Եւ մի՛ նենգեր զընկեր քո գաղտ[20]:

Այս խրատը ևս, ինչպես նախորդը, այբուբենի տառերի ծայրակապից հետո շարունակվում է մեկ այլ՝ այս անգամ ՆԵՐՍԷՍ ծայրակապով.

Նորոգ բանիս այսմիկ հանդէս,
Գումարելոց աստ տիրապէս,
Երգել տաղիւ հոմերապէս,
Խառնեալ ի հիւթըս հոգեպէս:
Բամեալ ի քերթըս տարրապէս,
Զանազանեալ տառիւ յանգէս.
Սա ոչ գիտնոց՝ այլ տղայապէս
Մանկանց տըւաւ նուսխայապէս.
Է թագուցեալ ընդ մարմնապէս
Երից յիսնից խորհըրդապէս
Սուրբ հոգեւոր բանըս պէսպէս,
Որոց նըպաստ եղեւ Ներսէս[21]:

Ակնհայտ է, որ այս և նախորդ խրատը Ներսես Շնորհալին հորինել է ուսուցողական, դաստիարակչական նպատակներով՝ սկիզբ դնելով մի նոր ժանրի մեր բանաստեղծության մեջ:

Շնորհալու սկզբնավորած ավանդը ամենևին էլ աննկատ չմնաց գրականության մեջ: Հենց Շնորհալու կրտսեր ժամանակակիցը՝ Գրիգոր Տղան, շարունակեց իր նախորդի գրական ավանդը[22]:

Խրատական բանաստեղծությունը առավել լայն թափով զարգացավ ԺԳ դարում: Արմենուհի Սրապյանը գրում է. «Բանաստեղծության այս տեսակը ԺԳ դարի հայ պոեզիայում նոր ու խոշոր երևույթ էր դառնում: Բարոյական-ուսու-

---

19 Նույն տեղում, էջ 483:
20 Նույն տեղում, էջ 491:
21 Նույն տեղում, էջ 492:
22 **Վ. Սաֆարյան**, *Կիլիկյան Հայաստանի գրականությունը*, Երևան, 1990, էջ 215:

ցողական բանաստեղծության որոշ սաղմեր արդեն կային Ներսես Շնորհալու ստեղծագործություններում: Հովհաննես Երզնկացին ոչ միայն ընդարձակում է նրա սահմանները, այլև ստեղծում քնարերգության մի նոր տեսակ՝ խոհա-խրատական բանաստեղծություն, որ ստանում է հատուկ ձև ու բովանդակություն և իր կատարելությանն է հասնում՝ պսակ ունենալով խոհական՝ իմաստաբանական քառյակները»[23]*: Փոքրիկ հայրեն-քառյակներն իրենց էությամբ իմաստասիրական խտացումներ են, աշխարհաճանաչման, իմաստության և ուսման պատգամներ: Իմաստասեր գիտնականը գիտակցում է նաև խրատի ներգործման արդյունքը և փորձում թափանցել խրատվողի հոգեբանության մեջ: Վերջին հաշվով, խրատող-խրատվող հարաբերությունը ավելի հստակ կպատկերացնենք, եթե հիշենք Մ. Աբեղյանի՝ Երզնկացուն տրված բնորոշումը. «Մեր այս գրողն իր ասքերով հանդիսանում է իբրև իսկական իմաստաբան քերթող, հանգիստ ու գիտուն վարդապետ, լուրջ բնավորությամբ, ավելի մտածող, քան զգացող»*[24]*: Այն առումով, Հովհաննես Պլուզը որպես իմաստուն մի գիտնական, խրատում է աշխարհին ու մարդկանց, խրատում է՝ իբրև աշխարհատես և աշխարհաճանաչ մի փիլիսոփա:*

Մինչ Հովհաննես Երզնկացին իր իմաստասիրական ասքերն էր շարադրում, անձնական ցավից ծնված, «ինքնաբուխ ազդումով», կարծես բնազդաբար, ինչպես գոհար, շարվում են Ֆրիկի հոգեշահ բանքերը: Ֆրիկն իր անհանգիստ բնավորությունը, իր անձնական ցավը շաղախեց բարոյա-խրատական ոտանավորին և այն անվանեց «հոգեշահ բանք»: Դեռ Ղևոնդ Ալիշանը նկատել է, որ Ֆրիկի «գրվածքն բարոյական խրատք են, սակայն սրտով սփռած»[25]*:*

Հենվելով իր կենսափորձի վրա՝ խրատողը (Ֆրիկը), բացում է մարդկային կյանքի մի շարք առեղծվածներ, քննում հոգու և մարմնի հակամարտությունը՝ առաջնությունը տալով հոգուն, շոշափում մահվան և ունայնության, մեղավոր մարդու, կրոնական այլ հարցեր: Ֆրիկի խրատական բանաստեղծությունն ունի նաև մի յուրահատկություն, որը նորույթ էր: Ե՛վ խրատողն էր Ֆրիկը, և՛ խրատվողը: Խրատող Ֆրիկն արդեն կյանքի ճանապարհ անցած մի բարեհոգի բանաստեղծ է, իսկ խրատվող Ֆրիկը, իր հետ նաև ուրիշները՝ աշխարհային մեղքերի մեջ ավաղող մարդիկ, կատարած մեղքերի համար քավության ձգտողներ.

Յիս նայելով՝ ձեզ խղճացէ՛ք, զի լի սրտիւ խրատ կու տամ,
Որ դուք չի գայք ի յիս ի մօտ, ես ի հրոյ ծով կու ծփամ[26]:

---

23 **Ա. Սրապյան**, *Հովհաննես Երզնկացի*, Երևան, 1958, էջ 109:
24 **Մ. Աբեղյան**, *Երկեր*, հ. Դ, էջ 349:
25 **Ղ. Ալիշան**, *Յուշիկք հայրենեաց հայոց*, Վենետիկ, 1870, հ. Բ, էջ 125:
26 **Ֆրիկ**, *Դիւան*, աշխատասիրութեամբ *Տիրայր արքեպիսկոպոսի*, Նյու-Յորք, 1952, էջ 254:

ԺԳ-ԺԴ դարերի բանաստեղծներից մեկի՝ Խաչատուր Կեչառեցու «Տամ ես քեզ բարի խրատ, թէպէտ եմ ողորմ ու լալի»[27] *խոսքերից կարելի է բանաձևել խրատող-խրատվող հարաբերության խնդիրը։ Բացի այս, Կեչառեցին մի տեղ դիմում է խրատվողներին, որոնց «եղբարք» է կոչում։*

Քնարական ուժով, անձնական դրամատիզմով աչքի է ընկնում Կոստանդին Երզնկացու խրատական բանաստեղծությունը։ Կոստանդինը յուրովի է օգտագործում խրատող-խրատվող հարաբերությունը։ Մի դեպքում զգայուն բանաստեղծը չար ու անգետ մարդկանց միջավայրում կաշկանդված, զգալով որ «գիտունն ի յանգիտաց մեջն ծառայ է չարաչար»[28]*, խրատում է ինքն իրեն։ Մյուս դեպքում՝ Կոստանդինն իր իմաստուն բարեկամի բերանով է խրատում իրեն։ Բայց խրատը, որքան էլ ուղղված լինի բանաստեղծին, իր բերանով ասված, թե խրատատու բարեկամի, միևնույն է, ունի մի նպատակ, այն է՝ խրատել «հասարակաց»։*

Զայս եմ ես ինձ խրատ և յանդիմանութիւն գրել,
Եւ զիս բազմաց նշան վկայ և օրինակ բերել[29]։

Հովհաննես Թլկուրանցին ևս շարունակում է նախորդների ավանդները և յուրովի հարստացնում հայ միջնադարյան բարոյախրատական բանաստեղծությունը՝ գրելով խրատ, պարսավ, ողբ և աղերսանք, որոնք ևս ունեն ունկնդիր հանրությանը խրատելու նպատակ։

Խրատն իր տարբեր դրսևորումներով հանդես եկավ նաև ուշ միջնադարյան բանաստեղծության մեջ՝ հասնելով մինչև Նաղաշ Հովնաթան ու Սայաթ-Նովա, այդուհետև մեր օրերը՝ հանդես գալով նաև նոր ժամանակներում։

Միջնադարյան խրատն իբրև ժանր ունի ժանրակազմ մի քանի առանձնահատկություն, որոնցից ամենակայունը խոսքի հորդորական բնավորությունն է, որ սովորաբար դրսևորվում է երկու կերպ՝ հաստատական և արգելական, ինչով էլ պայմանավորված է ժանրի հաջորդ ընդհանրական գիծը՝ խոսքի ուղղվածությունը երկրորդ դեմքին, թեև երբեմն խրատողը նաև խրատվողն է, որի դեպքում խրատը դառնում է ինքնախրատ։ Խրատի հեղինակային կերպարը միջնադարյան մտածող անհատն է՝ կրոնական ու աշխարհիկ ըմբռնումներով, դաստիարակելու ու բարոյակրթելու ակնհայտ նպատակադրմամբ, խրատող-խրատվող հարաբերության բանաստեղծական դրսևորմամբ։ Արձակ խրատները չափածոյի վերածելու և տաղերգության ժանրի խրատ ենթատեսակի սկզբնավորումը կապվում է Ներսես Շնորհալու անվան հետ, որի թողած երկու խրատները այդ ժանրի հիմքն են, որով Շնորհալին դարձել է խրատական բանաստեղծու-

---

27 **Խաչատուր Կեչառեցի**, *Տաղեր*, աշխատասիրությամբ ***Ա. Դոլուխանյանի***, Երևան, 1988, էջ 32։
28 **Կոստանդին Երզնկացի**, *Տաղեր*, աշխատասիրությամբ ***Ա. Սրապյանի***, Երևան, 1960, էջ 182։
29 Նույն տեղում։

թյան հիմնադիրը մեր պոեզիայի պատմության մեջ։

VANO EGHIAZARYAN

NERSĒS SHNORHALI AS THE FOUNDER OF THE GENRE OF DIDACTIC POETRY

Key words: Admonition, didactic subgenre in poetry, genre property feature, Nerses Shnorhali, innovator.

The present article treats the formation of the genre of didactic poetry by Nersēs Shnorhali. The medieval genre of admonitory poetry is characterised by several features, the most common of which is the use of persuasive speech, usually manifested in one of two forms, affirmative and prohibitive. Another common feature of the genre is the use of second person, though, as in case of self-admonition, the addresser and the addressee is the same person. The poet tends to be a medieval intellectual, one possessing his own worldview, of a more ethical turn of mind. Nersēs Shnorhali was the first to fashion the genre of admonition into verse, creating the subgenre of didactic poetry. So he proved to be a great innovator of Armenian verse forms, one who had several successors: Grigor Tgha (1133-1193), Yovhannēs Erznkats‘i (1225/30-1293), Frik (~1234-~1315), Khachatur Kech‘aṛets‘i (1260-1331), Kostandin Erznkats‘i (~1250-1314/28), Yovhannēs T‘lkurants‘i (14th-15th cc.), Naghash Yovnat‘an (1661-1722), and Sayat‘-Nova (1712-1795).

ВАНО ЕГИАЗАРЯН

НЕРСЕС БЛАГОДАТНЫЙ – ОСНОВОПОЛОЖНИК ЖАНРА ПОУЧИТЕЛЬНЫХ СТИХОТВОРЕНИЙ

Ключевые слова: Прозаическое поучение, поджанр поучения в общем контексте стихотворчества, жанрообразующие особенности, Нерсес Благодатный, новатор.

Предмет данной статьи – вопрос о формировании поджанра поучительных стихотворений Нерсеса Благодатного.

Средневековое наставление как жанр имеет ряд особенностей, наиболее устойчивой из которых является увещевательный характер речи, проявляющийся обычно двояко: в форме утверждения или запрета. Другой общий признак жанра – направленность речи ко второму лицу, хотя иногда наставник сам выступает в роли наставляемого: в этом случае поучение предстает в виде са-

мопоучения. Выразитель авторских поучений предстает в образе средневековой мыслящей личности со своими религиозными и светскими представлениями, с очевидным стремлением к просвещению и нравоучению, которые воплощаются в поэтических отношениях наставника и наставляемого. Преобразование прозаической проповеди в стихотворную и формирование поджанра наставления в общем контексте стихотворчества связаны с именем Нерсеса Благодатного, два наставления которого являются первыми образцами этого жанра. Став в этом отношении новатором в армянской поэзии, он имел нескольких последователей: Григор Тга (1133-1193), Ованнес Ерзнкаци (1225/30-1293), Фрик (ок.1234 - ок.1315), Хачатур Кечареци (1260-1331), Костандин Ерзнкаци (ок.1250-1314/28), Ованес Тлкуранци (14-15-й вв.), Нагаш Овнатан (1661-1722) и Саят-Нова (1712-1795).